ՀԱՂՈՐԴՈՒՄ

Մասիս քաղաքային համայնքի 2020 թ. բյուջեի I եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման վերաբերյալ

Համայնքի 2020 թ. բյուջեի վարչական մասի I եռամսյակի եկամուտները տարեկան պլանի նկատմամբ կատարվել են 22.5%-ով՝ 697 945.9 հազ. դրամ առաջադրանքի դիմաց մուտքերը կազմել են 157 225.9 հազ. դրամ:

Սեփական եկամուտները կատարվել են 23.1 %-ով, 294691.4 հազ. դրամի դիմաց կատարվել է 68054.9 հազ.դրամ:

Սեփական եկամուտներից `

Շենք շինությունների գույքահարկի մասով 34000.0 հազ. դրամ առաջադրանքի դիմաց հավաքագրվել է 10281.3 հազ. դրամ կամ կատարվել է 30.2%-ով.

Հողի հարկի մասով 30500.0 հազ. դրամ, առաջադրանքի դիմաց հավաքագրվել է 7286.9 հազ. դրամ կամ կատարվել է 23.9%-ով.

Փոխադրամիջոցներից գույքահարկի մասով 74000.0 առաջադրանքի դիմաց հավաքագրվել է 16817.6 հազ. դրամ կամ կատարվել է 22.7%-ով.

Տեղական տուրքերի առաջադրանքը 10995.5 հազ. դրամի դիմաց կատարվել է 3947.3 հազ. դրամ կամ կատարվել է 35.9%-ով:

Պետական տուրքերը կատարվել է 21.2%-ով՝ 15000.0 հազ. դրամի դիմաց մուտքերը կազմել է 3186.2 հազ. դրամ:

Տեղական վճարները պլանավորված 108275.1 հազ. դրամի դիմաց մուտքերը կազմել է 19753.0 հազ. դրամ կամ կատարվել է 18.2 %-ով, տեղական վճարներից աղբահանության վճարները կատարվել է 15 %-ով կամ 48192.0 հազ. դրամ առաջադրանքի դիմաց գանձվել է 10550.9 հազ. դրամ:

2020 թ. համայնքի բյուջեի վարչական մասի I եռամսյակի ծախսերը տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 22.4 %-ով՝ 697945.9 հազ. դրամ առաջադրանքից կատարվել է 156225.4 հազ. դրամ, որից՝

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կատարվել է 20 %-ով:

Շրջակա միջավայրի պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 22.7%-ով:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ նախատեսված ծախսերը կատարվել է 9.6 %-ով:

Հանգստ, մշակույթ և կրոն դասակարգումով նախատեսված ծախսերը կատարվել է 18.4%-ով:

Կրթության ոլորտի համար բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել է 25.8 %-ով:
Սոցիալական պաշտպանության ոլորտի համար նախատեսված ծախսերը կատարվել է 13.4 %-ով:

2020 թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասում նախատեսվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարումից մուտքեր 37728.0 հազ. դրամ, որից փաստացի մուտքերը կազմել է 227731.9 հազ. դրամ, ուղղակի վաճառքով գույքի օտարումից փաստացի մուտքերը կազմել է 173.36 հազ. դրամ:

2020 թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կազմել է 11410.0 հազար դրամ, որից՝

Քաղաքապետարանի վարչական ապարատի համար 941.0հազար դրամով ձեռք է բերվել գրասենյակային կահույք և սեղաններ, աշխատակիցների հաճախումների էլեկտրոնային համակարգ՝ 540.0 հազար դրամով:

Քաղաքի մուտքերի շարժը հսկելու նպատակով ձեռք է բերվել տեսադիտման համակարգ 7190 235 դրամով, համայնքի ենթակա կազմակերպությունների համար ձեռք է բերվել հակահրդեհային վահանակներ 12 հատ՝ 912.0հազար դրամ արժեքով:

Քաղաքի թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների ավարտից հետո վճարվել է շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության համար՝ 337 360 դրամ և հիմնանորոգված խմբասենյակների համար ձեռք է բերվել գույք՝ 1665 720 դրամի:

Ընդհանուր առմամբ բյուջեի վարչական մասի եկամուտների թերակատարման հիմնական պատճառ է հանդիսացել կորոնավիրուսային համաճարակի հետ կապված մարտ ամսվա ընթացքում մուտքերի կտրուկ նվազումը: Դա հիմնավորվում է նրանով, որ հունվար-փետրվար ամիսների սեփական եկամուտների 49115.2 հազար դրամ պլանային առաջադրանքի դիմաց մուտքերը կազմել է 52312.6 հազար դրամ կամ կատարվել է 106.5 %-ով:

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ՝ Ն. Սահակյան